ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Հունվարի 21-ից 26-ը տեղի ունեցավ հանրապետության գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը։ Այն ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

Առաջին նիստում, որին մասնակցում էին հանրապետության գիտական հաստատությունների ներկայացուցիչները, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գործունեությունը ՍՄԿԿ Կենտկոմի 1981 թ. պլենումի որոշումների լույսի ներքո զեկուցումով հանդես եկավ հանրապետության գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ Ա. Ղ. Իոսիֆյանը։ Նա նշեց, որ հանրապետության գիտնականները պետք է լուծեն էլեկտրակայանների գեներատորային հզորության հետագա մեծացման դժվարին հարցը, պետք է շարունակեն զարգացնել ձեռքբերումները արեգակի էներգիայի օգտագործման ուղղությամբ։ Նա խոսեց նաև մետաղամշակության, մեքենաշինության, մելիորացիայի և ջրամատակարարման, ագրոարդյունաբերության և այլ բնագավառներում առկա կարևորագույն խնդիրների լուծման գործում հանրապետության գիտնականների ձեռք բերած հաջողությունների մասին, նշեց առաջիկա ծրագրերը։ Քննության առնելով տեխնիկական առաջադիմության հարցերը, զեկուցողը այնուհետև կանգ առավ ֆունդամենտալ բնական և հասարակական գիտությունների ավելի արագ զարգացման խնդիրների վրա։

Քննարկված հարցերի շուրջը ելույթ ունեցան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Մ. Վ. Կասյանը, Վ. Հ. Ղաղարյանը, Մ. Գ. Մանվելյանը։

Տեղի ունեցան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամների և թղթակից անդամների ընտրություններ։

Ակադեմիայի իսկական անդամներ (ակադեմիկոսներ) ընտրվեցին Գ. Ս. Սահակյանը և Մ. Լ. Տեր-Միքայելյանը (ֆիզիկա, աստղաֆիզիկա), Հ. Տ. Ադոնցը (էներգետիկական համակարգեր), Ա. Մ. Պետրոսյանցը (ատոմային էներգետիկա), Ս. Գ. Մացոյանը (օրգանական քիմիա), Ա. Հ. Գաբրիելյանը (երկրաբանություն), Վ. Բ. Ֆանարջյանը (մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա), Է. Գ. Աֆրիկյանը (միկրոբիոլոգիա), Գ. Ա. Գալոյանը (նոր և նորագույն պատմություն), Է. Բ. Աղայանը (լեզվաբանություն), Գ. Ա. Բրուտյանը (փիլիսոփայություն), Է. Մ. Ջրբաշյանը (դրականություն և գրականագիտություն)։

Ակադեմիայի թղթակից անդամներ ընտրվեցին Ռ. Վ. Համբարձումյանը (մաթեմատիկա), Ս. Հ. Մատինյանը, Վ. Հ. Ջրբաշյանը, Դ. Մ. Սեդրակյանը (ֆիզիկա, աստղաֆիզիկա), Պ. Մ. Հերունին (ռադիոտեխնիկական համակարգեր), Ռ. Վ. Աթոյանը (հաշվողական տեխնիկա), Գ. Լ. Արեշյանը (էլեկտրական մեքենաներ և ավտոմատիկա), Կ. Վ. Ալեքսանդրյանը (մեքենաշինություն, մեքենագիտություն), Ի. Լ. Ներսեսովը (սեյսմոլոգիա, գեոֆիզիկա, գեոքիմիա), Վ. Ե. Խոջաբեկյանը (էկոնոմիկա), Ս. Հ. Մովսիսյանը (կենդանաբանություն), Գ. Հ. Բաղալյանը (բժշկություն), Ս. Ս. Արեշատյանը (աղբյուրագիտություն), Գ. Ս. Խանջյանը (արվեստագիտություն)։

Մ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ